



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԵՐՐՈՐԴ ՏՍՐԻ


ԹԻԻ ԶԶ

29 ՄԱՐՏ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



մը չկրնար իրեն յատուկ իրաւունքներ մը ունենալ, որ սնրոնարարելիութեան գաղափարը ներփակէ. և Եկեղեցւոյ կանոնաց սահմանին մէջ իրաւունք՝ եթէ բնածին են այդ հասարակութեան, հակասութիւն մը կը պարունակին. զի բնածին իրաւունքն Ընդհանուր Եկեղեցւոյ միայն կրնայ ըլլալ և ոչ հասարակութեան մը. իսկ եթէ շնորհուած են, ուրիմի իրաւունք չեն, այլ շնորհք, ոյր վասն բուն բառովը պէտք է վերջապէս անուանել զանոնք՝ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐ ՀՅՈՒՄՆԵՐ. որոնք Գերագոյն Իշխանութեան կողմանէ կրնան ինչ ինչ պարագաներու տակ փոփոխութիւն կրել: Իսկ թէ անոնք մեր Հասարակութենէն բարձուած ջնջուած են, սուտ է բացարձակ. կամ բացառութիւն մը գործուած է, և կամ ինչ ինչ զեղծումները ուղղել ուղուած է. այսչափ միայն. իսկ այս՝ ամենայն իրաւամբ:—Սակայն այն անձերն ու

րոնք կամ անկրօն ըլլալով, կամ կուսակցական, կամ էջմիածնական Եկեղեցւոյ հակամէտ, կամ շահախնդիր, կամ յաւառի կարծիս, կամ անտարբեր, ազգայնամոլ, արդիական, կամ անգիտանալով խարուած, եւլն, այս տեսակ անձերն, կ'ըսենք, որ ուզած են ազգասիրութեան ոսկեհիւս քօղին ներքեւ կամ աշխարհականացումի կամ Հռովմէն հեռացումի եւ կամ դեռ աւելի յախուռն գաղափարներ ծածկել, մերթ ընդ մերթ՝ հակառակ իրենց կամաց եւ գաղտնախոթ թաքթաքուր կեղծիքներուն, իրենց այդ գաղափարները կը ստիպուին յայտնել: Աստուծոյ մէջ է Կաթողիկէ ազգային անկախ Եկեղեցւոյ մը գաղափարը, իր իրաւունքներով օժտուած: Այդ գաղափարը՝ տիրահռչակ Կաթողիկէի նոր ծրագրին մէջ ալ ուրուագծուած էր. եւ ժամանակին երբ Վերահանուեցաւ, խօշ աղմուկի մէջ խղզել ուղիցին արդարացի զիտողութիւնները, բողոքելով թէ ոչ ոք բնաւ մտքէն անցուցած է այդ տեսակ հրէշային գաղափար մը: Բայց ահա դեռ նորերս, իրենց պաշտօնական եւ վճարուած թերթն է որ այդ հրէշային գաղափարին հանդիսարան կը դառնայ, փառաւորապէս: Յօդուած մը կար առաջնորդող՝ անոր 5058 թիւին մէջ, Դիսող ստորագրութեամբ, յորում, ի մէջ այլ մոլորութեանց, յայտ յանդիման կը դաւանուի եւ այս. «Քահանայապետները, կ'ըսէ, իրենց կոնդակներով ապահոված էին Հայ-Կաթողիկէներուն առանձինն ազգային Կաթողիկէ Եկեղեցւոյ մը գոյութեան պայմանները, որոնք հիմերը կը կազմէին իրենց ներքին եւ ազգային կազմակերպութեան, ձեւերուն, արարողութիւններուն»: Ասկէ աւելի բացայայտ խոստովանութիւն կարելի չէ եսթաղրել, բայց միանգամայն հակասական եւ անտրամաբան: Հայ-Կաթողիկէ Եկեղեցի, առանձին, ազգային, իր պայմաններով, որոնք հիմն են ազգային կազմակերպութեան եւ նաեւ ծէսերուն!... զարմանք. եւ գիտէ՞ք ո՞վ է այս ամէնը չնորհողը... Ս. Քահանայապետներն են եղեր, իրենց կոնդակներով: Ապշահար մնալու բան. ցոյց տուէք, ո՞հ, ցոյց տուէք մեզ

այդ Կոնդակները: Ա՛լ կը հասկցուի թէ յօդուածագիրը, տողորուած մտածելու այս եղանակաւ, կրցեր է ըսել նաեւ թէ՛ «Ազգին հնաւանդ իրաւունքները... արդէն բնորոշուած եւ հաստատուած Ս. Աթոռոյ եւ Ս. Քահանայապետներու կողմէ»: Կարելի է դուք ալ ինծի հետ չէք կրնար հասկնալ թէ իրաւունք որ կ'ընդունուի, կը վերաբերի յայնմ մասին անկախ եղողի մը. ուրեմն մասնական Կաթողիկէ Եկեղեցի մը պիտի ենթադրենք որ մասնակի անկախութիւն ունենայ Ընդհանուր Կաթողիկէ Եկեղեցիէն. անշնորհք անտրամաբանութիւն: — Եսթաղրելով ալ որ այդ ինքնասաց իրաւունքը ընդունուի, սակայն, ի՞նչպէս կը հաստատուի: Բայց եթէ Հռոմ իշխանութիւն ունի հաստատուելու, ուրեմն ունի նաեւ մերժելու կամ փոխելու կամ բարեփոխելու: Անցողակի գիտնալ կ'ուզէինք նաեւ թէ, ի՞նչ է տարբերութիւնը Ս. Աթոռոյ եւ Ս. Քահանայապետներուն որ այսպէս անտրամաբանօրէն կը զուգահրուին: — Նոյնպէս Դիտողը գիտել կու տայ թէ, Ս. Աթոռը այդ ամբաստանութիւնները իր նշանակութիւնը բնորոշուած չէր. Հռոմ չէր կրնար հապնեպս որոշում տալ... անմիջական որոշում մը տալ... եւ Սրբազան Քահանայապետին վերագրուած բանադրանաց բողոքներն ալ քեական ըլլալը...»: Կ'երեւի թէ այդ Դիտողը շատ կարճատես է մարմնոյ աչօք, չկրնար կոր որոշողութիւնները, վճռագիրները լաւ կարդալ. իսկ մերտաց աչօք՝ կոյր, կամքով՝ գիտումնասէր եւ յամառ. ուրիշ կերպով կարելի չէ այդչափ յայտնի մոլորութիւններ գրել: Իբրեւ պըսակաւմն, Դիտողը կը տարփողէ թէ Ս. Աթոռը վճռած է ազգին փափաքը լրացնել... բոլոր ուղածները ո՛չ միայն չնորհել, այլ եւ ինքն ապահովել հնաւանդ իրաւունքները, եւլն. եւ թէրզեանին դէմ հարկ եղած հրահանգները տուած է, ուր որ անկ է: — Կատարեալ բարբառաբանք:

Միայն թէ աստուծով ի յայտ կու գայ տրդէտ մտայնութիւն մը, յամառ ազգայնամոլութեամբ եւ անուղղայ մոլորութիւններով, որոնք, զժախտաբար, պայմանները չեն

ճշմարիտ կաթողիկէութեան եւ Ս. Աթոռոյ անկեղծ զաւակներ ըլլալու, ինչպէս ցանկ կը յիշեցուի: Ծշմարիտ զաւակը՝ հնազանդ է, եւ այնպէսով միայն պսակ պարծանաց է իւր Հօրը:

ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ (*)

(Շար.)

Իրապ: Ս. Պատկը լայնքը վէճն իւզրէ գապուլ իթմէք իչիւն, Բիլիսանն օրէնքէրինէ վէ էվամիրինէ պիր ինգիյատը քեամիրէ վէ իթաաթը մագպուլէ իլէ հազըրլանմալը տըր: Պու կիւն իթաաթաղլըզ րուհը թէամ միւմ էյլէմիշ տիր, հէր քէս քէնտի քէյֆինէ վէ միգաճընա թապի օլմագ իսթէյօր: Փազաթ պու իթաաթաղլըզ այլէլէրին խայրընա նէ՝ գատար զարարը տըր: Բիլիսայը շէրիֆ քէնտի էվլատլարընըն րուհանի վէ ճիւմանի խայրը իչիւն, Ս. Պատկ խորհուրդը միւնապէթիլէ պազը զանուն վէ գայիտէլէր գօմուշ տըր քի, թէէհիւլ իտէնլէր Բիլիսանն թէպէրրիւքեաթընա լայնք օլմագ իչիւն պուլարըն հարֆիյէն իճրաւըյա միւքէլէֆ տիրէր: Պիւսէն ալէյ, պսակըն Բիլիսաա իճրա օլունմասը ֆարզ տըր: Պու, Բիլիսայը շէրիֆին գաթի պիր էմիր տիր, չիւնքի, օ, թէէհիւլ իտէնլէրին, ազիլէրին մասունըլարը, Յիսուս Բրիսաաուն խորանը, Ս. խաչը վէ, պա խուսուս, ծնուն մուգատտէս թէնի վէ գանը գարչընտա Բիլիսա մէմուրընըն թէպէրրիւքեաթընա ալմալարընը վէ եէնի հայաթլարընը օտաա պաղլամալարընը արզու իտէր: Բէզալիք, Բիլիսա գանուլարը միւճիպինճէ, Պատկ խորհուրդը Բիլիսատան թային օլունմուշ օլան կիւնլէրտէ իճրա էտիլմէլի տիր: Նասագ օլունմուշ կիւնլէրտէ տիւյիւն իթմէմէք թէնպիլինէ րիալէթ իթմէյէնլէր, պու սուրէթլէ Բիլիսա թէնպիլէրինի բայիմալ իթմէնին Ալլահա նէ գատար նա մագպուլ օլտուլընը էյիճէ տիւչիւնմէլի տիրէր: Էվլէթ, սահիւ

Գաթօլիքլէր ծնւար տըր քի հէր վագըթ վէ հէր սըրատա Բիլիսա գալանիյինէ վէ իէնպիհաթընա միւթի օլտուլարընը իսպաթ էտէրլէր:

Էմին օլունուզ քի, պու թարզ հազըրլըզլարլա Ս. Պատկ խորհուրդընը գապուլ իտէնլէր, ճէնապը Ալլահն պէրէքեաթընա մագհար օլաճագ վէ էպէտի հայաթա նաֆի մէյլէլէր հուսուլա կէթիւրէճէք տիրլէր: Շուտարը միհնէթ օլան տիւնհատա թէքրար զանմէթ վէ մէշագգաթըն նօգսան օլմայաճագը աշիքեար տըր: Պօղոս Առաքեալ «Օ կիպիլէրին միհէն ու մէշագգը ճիւմանիլէլէրի օլաճաղընը» թաատիզ իտիյօր: (Ա. Կորն. է. 28): Փազաթ, էլլէրինտէն կէլէնի եարտըզլարը վէ Ալլահն թէպէրրիւքեաթընը ալտըզլարը իչիւն գամիր րահաթլըզընա մալիք օլաճագ տըրլար: Վէ հէր քէսին, քէնտի հալի վէ մէսլէքի իպթիզաւընճա սապը իլէ չէքտիլի զանմէթլէրի, հէմ պու տիւնհատէ վէ հէմ ախրէթտէ րապպ միւքեաթաթլայաճագ տըր:

Սէվկիլիլէլ էվլատլար, կիճէ կիւնտիւլ մէրհամէթի իլահիյէտէն թէմէննի իտէրիզ քի, պու էսասի վէ մուհիմմ հազիգաթլար սուրէթը գալիլէտէ ճէմաաթըմըզըն ֆիքրինտէ թէգարրուր իթսին, չէյլէ քի սէվկիլիլ ճէմաաթըմըզըն պսակլարը, Ալլահն վէ Բիլիսանն գալայիտը մագպուլէսի ահքեամընճա իճրա օլունուլար վէ թէգէվվիւճաթը միւպարէքէ իլէ թէէսսիւս էյլէմիշ օլան այլէլէր թէրագգը իթսինլէր, ֆէյզ պուլտունլար, էպէվէյնէ միւթի օլան, ծնւարըն թաճ վէ շէրէֆինի թէշքիլ էյլէյէն էվլատլար սահիպի օլտունլար, վէ Պիտոս Առաքեալըն աինտարլարա եազըզ արզու իթտիլի իւզրէ, էվլէրտէ րահաթլըզ, սիւքիւնէթ վէ սաատէթ հիւքիւմֆէրմա օլտուն, վէ հէր շէյտէն էվլէլ, հէմէքեար պուլունընը, եէկտիլէրինիլի սէվլինիլ, չէֆագաթլը վէ միւթէվազի օլունըզ, ֆէնալըզա պէտէլ, ֆէնալըզ եաքմալընըզ, ֆասլա գարչը ֆասլքեար պուլունմալընըզ, եա, պունըն աքսի օլարագ միւպարէքլէյինիլ, չիւնքի սիլ թէպէրրիւքեաթա վարիս օլմագ իչիւն տալէթ օլուն

(*) Տես թիւ 85, էջ 452:

տընը» (Ա. Կաթող. Գ. 8)։ Իշթէ Գաթողիք այիլէլէրէ ան սամիմ իւլ գալալ թէմէննի իթտիյիմիզ պու տըր :

էյ սէվկիլի մուսավինլէրիմիզ միւսթէրէմ վարդապետլէր, պիր գաչ սէօզ տէ սիզէ խիթապ իթմէք իսթէրիզ :

էվվէլ էմիրտէ, պու կոնդակըմըզն միւստէրիծաթընը Գիլիսալարընըզտա ճէմաաթա իյզաչ էթմէքլիյինիզի թալէպ էտէրիզ :

Շու պէտպախթ ասըմըզտա Գիլիսալը շէրիֆին թէսէլլիսի իչիւն տուա իթմէնիզի, վէ Ս. Պաակ վասըթասըլլա ճէմաաթըմըզ իչինտէ ազիլ վէ տրեսար այիլէլէր թէշէքքիւլի խուսուսընտա վազ էյլէմէնիզի արզու էտէրիզ : Պուստան մատա, այրըմա սիզէ եօլլատըմըզ մաթպու վարադատա գիքը օլունմուշ օլան, էօնիւմիւզտէքի Մեծ-Պահքտան իթիպարէն, պիւթիւն սէնէ գարֆընտաքի պահք վէ ծոմլար հագընտա վէրիլմիշ բուխսաթը ճէմաաթընըզա թէպլիզ վէ ծնլարը, պահք իլէ ծոմ խուսուսընտաքի վազիֆէլէրիննի հիւսնի իյֆասընա թէշլիզ իթմէքլէ պէրապէր սէվկիլիւ վալիտէմիզ Ս. Գիլիսանըն, քէնտի էվլատլարը իչիւն բէրվէրտէ իթտիյի շէֆազաթը վէ ծնլարա սուհուլէթ օլմագ իւզրէ իհան էյլէտիյի միւսաատաթը թէֆհիւմ էտինիզ : Մամաֆիյի, վիւճուտլարընըն բահաթալըզը հասէպիլէ, օմիւսաատէլէր տայիթէսինտէ տէ պահք վէ ծոմ թութամայսնլարա տուա կիպի, սատագա կիպի սայիր կէօնա պիր ապաշխարութիւն ամէլինտէ պուլունմագ պօրծը գօյունը :

Մանիէն, թէգարրուպ իտէն ապաշխարութիւն կիւնլէրինտէ հէր քէսի, Գրիսթիանա վէ սահիհ Գաթողիկէ հագըշըր խայր ամէլլէրլէ ազիլ Բառալլա կիւնլէրինէ հաղըրլանմայա տալէթ իտինիզ : Վէ բէսուլանէ զայրէթինիզի մէվզիլի ֆիլէ գօհարագ, պու ճէմաաթա Գրիսթիան թալիմաթընըն պաշլըմա վէ էսասի շօթալարընը էօյրէտինիզ, հիչ պիր ինսանի սայկըյա գարըմագսըզըն, ճան սէլամէթիննի էհէմմիյէթի ազիմէսինի ծնլարա վազ էյլէյինիզ :

Հէր շէյտէն զկատէ, Սըբազան Բաբա

հագըթէթլէրիննի Զաթը Շէրիֆի հագընտա վազիֆէթէն պօրծու օլտուղըմըզ մուհապպէթի, ամմէնին գալպինտէ թամիւմ էթմէնիզի, օնուս պիւճիւմլէ էվամիր վէ Նիլաթը խայրիսահանէսինէ պիւա գալտ ու շարթ իթաաթ վազիֆէսինի քէմալը էհէմմիյէթլէ էօյրէթմէնիզի թավսիյէ իտէրիզ : չիւսքի Գրիստոսըն հագըզի վէ հանըլմագ վէքիլի օլտուղընտան, օնուս էմիրլէրինէ իթաաթ իթմէքսիզին սահիհ Գաթողիք օլմագ գաթիէն միւմքին տէյիլ տիր : Պուստան մատա, ճէմաաթ չօճուզլարընըն Գաթողիք թէրպիլէ ու թալիմի ալմասընա պէզլի հիւմէթ իտինիզ : օնլարը սըղարը սիննլէրինտէ թալիմէ զայրէթ էյլէյինիզ : Օնուսճը Սըբազան Պիոս Բաբամըզըն 1910, Օգոստոս 10տա նէշը էյլէտիյի Կոնդակ ահքեամընա թէվֆիզէն, միւմքին օլտուղը գատար չօք օլմագ իւզրէ, օքիւչիւքլէրին գալպլէրինի, բապալըմը Զիսուս Գրիստոսըն մուգատտէս թէնիլէ, մէլէքլէր էքմէյի իլէ թագվիլէ իտինիզ : Բէտէր վէ վալիտէլէրէ անլաթընըզ քի էվլատլարընա պիր էյի Գաթողիք թէրպիլէսի վէրմէզլէրտէ, օնլարը, եա հիչ Գրիստոնէական Վարդապետութիւն տէրսի օլմահան վէ եախօտ վարսա պիլէ, բէք սաթհի պիր սուրէթտէ օլսն մէքթէպլէրէ եօլլալաճագ օլուրլարսա, Ալլահըն հուզուրընտա տէհէթլի ճէվապ վէրէճէքլէր : Նիհայէթ, էյ Ալլահըն քահանալարը, ճէմաաթ արասընտա իպատէթ վէ տրեսարըզըն արթմասը, պախուսուս Ամինասուրը Հաղորդութիւն խորհուրդընա եալընըզ սըզ սըզ տէյիլ, իլլա Բաբա հագըթէթլէրիննի թավսիլէսի իւզրէ, հէր կիւն հագըլաճագ ատէթի մագպուլէսիննի թէամմիւմ իթմէսի իչիւն հէր տիւրլիւ զայրէթի սարֆ իտինիզ :

(Մապաշի վար)

Գ Ի Տ Ա Վ Ա Ն

ՍԱԻԱՌՆԱԿԸ

Արդի ամենահետաքրքրական ու շահեկան գիւտերէն մին է՝ սաւառնակը (aeroplane), որուն մասին լաւ կը համարինք մեր ընթերցողներուն ինչ ինչ տեղեկութիւններ տալ:

Կ'երեւի թէ մարդս ինչ բարձակ (surface portante) ալ որ գործածէ չի կրնար օդին մէջ վերանալ իր սեփական ուժերով: Այս բարձակները, անկարգել (parachute) կամ զուգահեռական (parallèle) մակարդակները (plan), երբեք ծառայած չեն վերելքի, այլ լոկ սահէջքի (glissade) կամ վայրէջքի (chute) գիւրացման: 10,000 Ֆրանսի վարձք սահմանուած է առաջին անգամ իր սեփական ուժով 10 մէտր օդագնացութիւն ընողին: Բազմաթիւ արուեստասէրներ թռկերով, կը տաւներով զարդարեցին իրենց երկանուակները (bicyclette), բայց զանոնք արձակելու իսկ չյաջողեցան: Ըստ Ֆէրպէրի՝ սեփական միջոցներով օդին մէջ բարձրանալը այնպէս անկարելի է ինչպէս բոլորակիմ ֆառակուսի ըլլալը. ուստի այս մասին թափուած ջանքերը անյաջողութեան պիտի մատնուին: Ուրովհետեւ ճախրորդին, երկանուակին և թռկերու չրջակին (châssis) ծանրութիւնը կը հաշուէ ան 150 քիլօկրամ. կը հետեւցնէ թէ այս ծանրութիւնը վերցնելու համար պէտք է 21 քառակուսի մէտր մակերեսով բարձակ մը և 30—40 քիլօկրամ վերամուղ ուժ ունեցող շարժակ (moteur) մը: Արդ, քանի որ մարդ շարժակը չորս հինգ քիլօկրամէն աւելի ուժ չունի, անկարելի է որ այս բանին մէջ կարենայ յաջողիլ: Աւելցնենք նաև որ 21 քառակուսի մէթր կազմած (appareil) մը 1500—3000 Ֆրանսի կ'արժէ վաճառորդի մը քով, կամ 4000 Ֆրանսի և երկամեայ աշխատանք՝ յօրինողին վրայ: Լաւ է ուրիմն որ մարդիկ հոտ կենան ասով ժամավաճառ ըլլալէ:

Բարձակը կազմուած է երկու թռկէ կամ երկու զուգահեռական մակարդակէ. ամբող-

ջացուցիչ մասերն են՝ առգետնումի (atterissage) անուարարձ չրջակը, թռկերուն գաւարը (gauchissement), տասը մէթրի չափ երկայն տտունը՝ որ հաւասարակշռութիւնը հաստատ կը պահէ, և ուղղութեան ու բարձրութեան զեկեր: Պտուտակ (hélice) մը մղող շարժակն է որ այս ամբողջին կեանք կը հաղորդէ: Ուստի օդագնացութիւնը կարելի չէր՝ բռնամուղ, ուժեղ և միանգամայն թռկեւ շարժակի մը գիւտէն առաջ: Ամէնէն աւելի յարգի է Կնոմի չրջադարձիկ շարժակը: Ու մանք նախամեծար կը համարին հասարակ ինքնաշարժի (automobile) մը շարժակը՝ օդագնացութեան տեսակէտով պատրաստուած: Մետաղէ մասերը օժելու համար կը գործածուի տղիւզը (huile de ricin). որովհետեւ այս իւղին մաքուրը ամենամուղ քանակով կը պարունակէ մետաղամեծա պարարտ թռկուններէն, չի լուծուիր քարիւղի և հանքային իսկութեանց մէջ, չի վնասեր ձգախէժին (caoutchouc): Սակայն սա անպատեհութիւնը ունի որ շուտով կը կեղտոտէ և կը հարկադրէ յաճախ շարժակը քակելու: Շովիէրի պտուտակը ամէնէն գործածականն է. բայց մղանակի (propulseur) խնդիրն ալ տակաւին լուծուած չ'երեւիր: Սաւառնակին ինչ ինչ մասերը որ առաջ փայտէ էին, այժմ սկսած են մետաղէ ընել: Կան նաև ամբողջովին մետաղէ սաւառնակներ. կտաւին տեղը կը բռնէ բնալեղի (aluminium) թիթեղ մը:

Քիչ գիւտեր ասոր պէս արագօրէն յառաջացեր են: Մի քանի տարուան մէջ օդարշաւի (aérodrome) յաջորդեցին քաղքէ քաղք և ապա մայրաքաղաքէ մայրաքաղաք ուղեւորութիւններ. շինուեցան երկու երեք մարդ առնող կազմածներ: Բարձրութեան մրցակէտը (record) աստիճանաբար աւելցաւ, և այժմ չահած է Բէրէոն որ 6000 մէտր բարձրութեան հասեր է:

Բէրէոն հետեւեալ կերպով կը բացատրէ այդ ահեղ բարձրութեան մէջ իր ունեցած տպաւորութիւնները: «Համանկարը հիւսնալի էր: Տեղական օդ մը կար, ամէն բան կը տեսնէի ինծմէ վար: Բարիդ ինծի կ'երեւէր իբր քիչ մը մուսլ զանգուած մը. բայց այն-

քան հեռուներն ալ կը տեսնէի որ անկարելի
չէ Ռուսներն ալ տեսած ըլլալս: Երկու վայր-
կեան չանցած 1000 մէդր բարձրութեան հա-
սայ: Մտածեցէ՛ք, տրամադրութեանս ներ-
քեւ ունէի 160 ձի: Մէկ քառորդէն հասայ
3800 մէդրի: 5700 մէդր բարձրութեան վը-
րայ հանդիպեցայ խիստ գէշ հոսանքներու,
բայց անոնք թոյլ տուին ինձ աւելի վեր
բարձրանալ: Այս բարձրութենէն սկսեալ
պայքարը խիստ բուռն եղաւ: Օդի չգոյու-
թեան պատճառաւ կասեցայ. որովհետեւ տա-
կաւին 20 լիդրա իսկութիւն ունէի և կըր-
նայի աւելի բարձրանալ եթէ օդ ըլլար: Ա-
մէնէն աւելի նեղուեցայ ցուրտէն: Փորձերս
պիտի վերսկսիմ՝ և կ'ուզեմ 6000 մէդրէն ալ
վեր բարձրանալ:» Բէրէնի յաջողութեամբ
երկու տարուան մէջ կրկնապատկուեցաւ
բարձրութեան չափը սաւառնորդութեան մէջ:
1911ին Լըկանեէօ հասաւ 3100 մէդր բարձ-
րութեան. և նոյն սաւառնորդը նոյն տարին
Յուլիս 9ին անցաւ իր մրցակէտը և հասաւ
3200 մէդր բարձրութեան: 1911 Օգոստոս
5ին հարկւրապետ Ֆէլիքս հասաւ 3500 մէդ-
րի: Նոյն տարին Սեպտեմբեր 4ին, Կարոս
հասաւ 3950 մէդրի, իսկ մէկ տարի և երկու
օր ետքը Կարոս կրցաւ հասնիլ 4960 մէդր
բարձրութեան: Բայց զինքը գերազանցեց
1912 Սեպտ. 17ին Լըկանեէօ, հասնելով
5450 մէդր բարձրութեան: Կարոս նոր փորձ
մը ըրաւ Սեպտ. 11ին և հասաւ 5800 մէդրի
բայց ճիշդ երեք ամիս միայն տեւեց այս
մրցակէտը. որովհետեւ զինքը գերազանցեց
Բէրէնի 31 տարեկան սաւառնորդ մը: Բէ-
րէնի վերելքը տեւեց մէկ ժամ. իսկ 6000
մէդր բարձրութենէ վար իջնելը հազիւ 7
վայրկեան տեւեց: Օդը այնքան պայծառ էր
որ փորձին ականատես քննիչները բնաւ աչքէ
չվրիպեցուցին զինքը:

ՕՐՄԱՆԵԱՆԻ "ՀԱՅՈՑ ՆԿԵՂԵՑԻ", ԳԻՐԲԸ (*)

(Շար.)

Դ.

Օրմանեան Բ. Հատածին կամ Գլխոյն մէջ
«Հայ Եկեղեցւոյ ծագումը» տիտղոսով կը
ճգնի Էջմիածնական Եկեղեցւոյ ինքնավար և
անկախ կաղմակերպութեան մեծ հիմնաքարը
գետեղել: Էջմիածնական Եկեղեցւոյ ըսի և
ո՛չ Հայ՝ հակառակ հեղինակի տիտղոսին. ու-
րովհետեւ իբրեւ Հայ ամօթ սեպեցի փարիլի
և փառապանծ Եկեղեցւոյս՝ այնքան փրծուն
ու աւագային հիմ մը գրուած տեսնել՝ ինչ-
պիսի է Օրմանեանի դրածը: Եւ իրօք՝ հոն
դաւանական նախաձեռնեալ մոլորութիւն
մը իր դրութեան հիմ ենթադրելէն վերջ՝ եւ
տեւէ կ'ըլլայ հեղինակը իր պատմութեամբ
ծեփելու նոյն հիմը:— Ո՞րն է այս դաւանա-
կան հիմը, որուն յեցած է Էջմիածնական Ե-
կեղեցւոյ անկախութեան շէնքը.— Առաքե-
լականութիւնն կամ Առաքեալէ մը հիմնուած
ըլլալը՝ իրաւունք կու տայ հիմնուած Եկե-
ղեցւոյն կամ հասարակութեան անկախ, ինք-
նագլուխ և ինքնավար ըլլալու.— Կամ հե-
ղինակին բառովն ըսելու համար. «Առաքե-
լութեան կնիքը... կը հաւաստէ անոր ուղ-
ղակի ինքնուրոյն սկզբնաւորութիւնը, առանց
ուրիշ հնազոյն Եկեղեցւոյ մը գործակցու-
թեան» (էջ. 24):— Մէկ խօսքով, կ'ենթադրէ
հոս ինչ որ այլուր բացէն կ'ըսէ, թէ Առա-
քելոց դասը նուիրապետական գլուխ մը չու-
նենալով, Առաքեալներն բացարձակօրէն հա-
ւասար էին իրաւաբանութեամբ և այդ հա-
ւասարութեան բերմամբ իրարմէ անկախ էին
և ինքնագլուխ: Այս սկզբունքն ենթադրելէ
կամ անոր ակնարկելէ վերջ՝ բոլոր ուժը կը
թափէ Հայ Եկեղեցւոյ Առաքելականութիւնը
կամ ինչպէս կ'ըսէ ինքը Առաքելութիւնը հա-
տատելու համար, հօգ փաստերով պիտի ը-
սէր Տաճար. անհեղեղ եղանակաւ՝ պիտի
ըսէր Հանդէս Ամսօրեայ. մենք պիտի ըսենք՝

(*) Տես թիւ 85, էջ 154:

իմաստակորէն : Եւ որովհետեւ իմաստա-
կութիւնը հակասութեան կը տանի , խեղճ
Օրմանեանը իր բոլոր ճարպկութեամբ կըր-
ցած չէ ազատ մնալ այդ ինքնահետեւիչ շուա-
րումէն . տեսնենք :

Օրմանեան՝ որուն գլխաւոր նպատակն է՝
ո՛չ այնչափ իր եկեղեցւոյն հաստատութիւնը
այլ անոր հեռացումը Հոռոմէական եկեղե-
ցիէն , չի կրնար զսպել իր այդ խիթացող
հեռը և անով կը յանդգնի Հայ եկեղեցւոյ
Առաքելականութիւնը Հոռոմէական եկեղեց-
ւոյ Առաքելականութեան համեմատել՝ ըս-
կըզբան յարեւմման , իսկ յետոյ աւելի պատ-
մական արժէք տալով առաջնոյն : Եւ այն-
պիսի իմաստով բացատրութիւններ կը գոր-
ծածէ , որ անզգոյշ ու սոգէտ ընթերցողին
զիրար երկրայական կը ներկայացնէ Հոռոմ-
մէական եկեղեցւոյ Առաքելականութիւնը ,
իսկ հաստատուն , ստոյգ , անհերքելի Հայ ե-
կեղեցւոյնը : Այդ հաստատուն , ստոյգ ու ան-
հերքելի եղելութիւնը՝ հիմնուած կը գտնէ
Ս . Բարդողիմէոսի և Թադէոսի Հայաստան
գացած ըլլալուն և զՀայ եկեղեցին հիմնած
ըլլալու նախնական աւանդութեան վրայ :
Բայց որովհետեւ այդ աւանդութեան տկար
կողմերն կը տեսնէ ինքն ալ , հետեւաբար
զանոնք պարտկելու համար՝ կը սկսի քնն-
նադատական սկզբունքներով մը , որոնց (կա-
նուխէն ըսենք) հաւատարիմ չի գտնուիր
ինքը և կը հակասէ առանց ամչնալու . այդ
իր ձիրքն է :— Սկսինք այդ սկզբունքներէն
իր կարգն պահելու համար :

Ա . Սկզբունք .— «Ամեն եկեղեցիներու
ծագումին վերաբերող եղելութիւններ՝ ան-
քափանցելի վարագուրի մը ներքեւ ծած-
կուած են եւ մեր հետազոտութիւններէն կը
խուսափին . որովհետեւ կը պակսին այն վա-
ւերագիրերը՝ որոնք պիտի լուսաբանէին ա-
ռաջիկ Առաքելներուն գործերը , եւ ընդ-
հանրապէս բովանդակ Առաքելական գոր-
ծունեութիւնը» :— Հոռոմէացի պատմաբանին
(Տիտոս Լիվիոսի) յառաջաբանն յարմար տե-
սեր է այս գլխոյն , այն ազգի մութ ծա-
գումը եկեղեցեաց ծագումին համեմատելու
համար : Այդ եկեղեցեաց մէջ ըլլալու է ան-

շուշտ Հայ եկեղեցին ալ և անոր ալ ծագու-
մին վերաբերող եղելութիւններ ԱՆՔԱՓԱՆ-
ՑԵԼԻ կը մնան և մեր հետազոտութիւններէն
կը խուսափին . հապա ի՞նչու քիչ յետոյ այս
ընդհանուր օրէնքէն կը բացառուի նոյն ե-
կեղեցին և անոր ծագումի վերաբերող Առա-
քելականութիւնը՝ ո՛չ միայն նախնական այլ
նաեւ ՀԱՍՏԱՏՈՒՆ աւանդութիւն մը կ'ըլ-
լայ . և աւելի առաջ երթալով՝ աւելի զօրեղ
ու կայտառ չեղտով ՍՏՈՅԳ և ԱՆՀԵՐՔԵԼԻ
ԵՂԵԼՈՒԹԻՒՆ կը քարոզուի : Ի՞նչու համար
ի սկզբան երկշտ ու մտահոգ տեսնուելէ
վերջ՝ տակաւ ձայնը կը զօրացնէ ու կը վեր-
ջացնէ կոկորդալիւր աղաղակաւ թէ ստոյգ և
անհերքելի է իր զիտած եղելութիւնը ,
որուն համար ինքն ալ կը վկայէ թէ կրնայ
քննադատական դիտողութեանց առիթ ըն-
ծալել :— Նախնական , հաստատուն , ստոյգ,
անհերքելի աւանդութեան մը յայտնապէս կը
հակասէ՝ նոյնին անքափանցելի վարագուրի
մը ներքեւ ծածկուած ըլլալն եւ մեր հետա-
զոտութիւններէն խուսափիլն , ինչպէս նաեւ
քննադատական դիտողութեանց առիթ ըն-
ծալելը :

Բայց հեղինակն իր մտքին մէջ չարա-
տանջ սուեցում մը ունի Հոռոմայ եկեղեց-
ւոյն դէմ , որուն ստոյգ ծագումին , անհեր-
քելի Առաքելականութեան չի կրնար տանիլ ,
հետեւաբար չ'ախնաժիր անոր վրայ ալ իր
անթափանցելի վարագուրին մէկ ծուէնը նե-
տել ու ստուերտել՝ պատճառաբանելով այս-
պէս . կամ Հոռոմայ եկեղեցիին ալ ծագումը
անպատմական է , կամ եթէ սա ստոյգ է ,
Հայ եկեղեցւոյն ալ ստոյգ եւ անհերքելի
պէտք է նկատուի , յար եւ նման ուրիշ Առա-
քելական եկեղեցիներու ծագումին : Վասնզի
կ'ըսէ . «Հայ եկեղեցւոյ աւանդութեանց դիմ
յարուցուելիք քննադատութիւնները , աւելի
զօրաւոր չեն քան այն քննադատութիւնները ,
որոնք յարուցուած են այն եկեղեցիներու
ծագումի մասին , որոնք ընդհանրապէս իր-
եւ Առաքելական ճանչցուած են» : Չենք
գիտեր ինչպէս թէ կարեկցիլ այսպէս տարա-
կուսի և ստուգութեան մէջ տարուբերող
մտքին վրայ , որնոր կը տքնի մէկ կողմանէ

տարակուսելին ստուգութեան բարձրացնել
և ստոյգն տարակուսի իջեցնել՝ երկուքն
յար և նման, պատմականօրէն համարժէք
ներկայացնելու համար: Եւ ինչո՞ւ համար
ընել պատմական այս աճարարութիւնն.
յաղթանակել տալու համար անպատճառ՝ ոչ-
պատմական գաղափար մը, հակառակ ասէն
քննադատական դիտողութեանց, հակառակ
նոյն իսկ պատմական իրողութեանց:

Սակայն այս բրած պահուն՝ Հռովմայ Ե-
կեղեցւոյն առջեւ երկչոտ կը գտնուի և ի-
մաստակութեամբ մը անոր Առաքելականու-
թեան իրողութիւնը կասկածելի կ'ընէ ու
միանգամայն կը հաստատէ, կը հեգնէ ու կը
դաւանի: Ահա ինչպէս. Հռովմեական Եկե-
ղեցին ալ, որ այդ սեսակեօն (այսինքն
պատմականօրէն ծանօթ ու ստուգելի վի-
ճակի տեսակէտէն) ԱՄԷՆԷՆ ՆՊՍՍՏՍԻՈՐ
դիրքն ունեցած է (Ահա դաւանութիւնը),
քանի որ նոյն իսկ Կայսերութեան Մայրա-
քաղաքին մէջ իւր ծագումն ստացած է, նա
ալ ԾԱՆՐ դժուարութեանց դիմաց կը գտնուի
(ահա հեգնութիւնը), երբոր հարկ կ'ըլլայ
Ս. Պետրոս Առաքելալին Հռոմի մէջ անցու-
ցած ժամանակը հեղել. մինչդեռ այդ խըն-
դիրը ԻՐԵՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ԿԷՏ ՄԸՆ Է
(Ահա իմաստակութիւնը), քանի որ անոր
վրայ կը հիմնէ բոլոր իւր Վարդապետական
կազմածը: — «Հռովմ ո՞ր տարին գացած ըլ-
լալն և ո՞րչափ ատեն հոն մնացած ու աշ-
խատած ըլլալն... կը պատասխանենք հռչա-
կաւոր պատմաբանի մը հետ, եական կեօն
բողոքովին անկախ և ուրոյն խնդիր մ'է»
(Hergenrother). զլիսաւոր և եական կեօն է
որ Ս. Պետրոս Հռովմ դացած՝ այն քաղաքին
Եկեղեցին հիմնած ու հոն մնում ըլլայ. և
այս եղելութիւնն պատմութեան մէջ բա-
ցարձակօրէն ցուցուած է և չի կրնար տա-
րակուսի տակ ձգուիլ. և ասոր համար կրնայ
ըսուիլ թէ, «Ասոյց եւ անհերքելի եղելու-
թիւն մը պէտք է նկատուի»: Հետեւաբար Օր-
մանեանի ըրածը տգէտները խաբելու և գէթ
տարակուսի մէջ ձգելու տգեղ իմաստակու-
թիւն մ'է, զոր գրաւորապէս և հրապարակի
վրայ ընելու յանդգնութիւնն որակելու բառ

չունինք: Մենք Հռուսերի համար գիտէինք
թէ քարոզած և գործադրած է «հարկա-
ւոր սուսեր»ով իմաստակելու օրինաւորու-
թիւնը. մանաւանդ երբ Հռովմայ Եկեղեցւոյ
դէմ ըլլայ խնդիրն: Բայց այդ ամէն ուրա-
ցողներու նշանաբանն ըլլալու է, որոնց մի
անգամ ցմիշտ նկարագրութիւնն ըրած է Ե-
րազմոս իր ծանօթ երգով, որ կրնայ ուրա-
ցողներու շարականն կամ քայլերէն նկատ-
ուիլ.

*Jam cuculla vale et cappa
Vale prior, custos, papa,
Cum obedientia!
Ite vota, preces, horæ,
Vale timor cum pudore,
Vale conscientia!*

Երբա՛ք քարով, կրկուդ, սրբա՛ւ,
Եւ վաճառայր, Տեսուչ ու Պապ,
Հնազանդութեան հետ այժմե՛ն:
Երբա՛ք ուխտեր, աղօթք ու ժամի,
Երբա՛ս երկիւղ՝ անօրին հետ,
Երբա՛ս քարով խղճմորսանք:

Իմաստակութիւնն է այն ճարտար բուն
կամ սուլիչն, որով միամիտ թռչուններն
կ'որոսացուն. և Հռուսեր կը յորդորէ զայն
գործածել՝ երբ կ'ըսէ. «Աշխարհքը կ'ուզէ
խաբուիլ»: Օրմանեանն ալ կ'երեւի էջմիած-
նական Հայոց խաբուելու տրամադրութենէն
կ'ուզէ օգտուիլ. մե՛ղք ազգին:

Գանք դրած սկզբունքին. ամէն Եկեղե-
ցիներու ծագումը ծածկուած է և մեր հետա-
զօտութիւններէն կը խուսափի կ'ըսէ. հապա
ինչո՞ւ համար հետազօտելու կ'ելլէ իր Հայ
Եկեղեցւոյն ծագումը. ինչո՞ւ համար քիչ վար
Հռովմեական Եկեղեցւոյ գիրքն այդ տեսակէտէն
նպաստաւոր կը խոստովանի. իր ըսածն ինք
կը ջրէ, և այս կ'ըսուի պատմութիւն գրել
Օրմանեանի ոճով և խեղճ Հայուն համար: —
Ամէն Եկեղեցեաց ծագումն այնքան ակնա-
խուսափ չէ. նոյն իսկ Հայ Եկեղեցւոյ ծա-
գումը աւելի ծանօթ է՝ քան որչափ չու-
զեր համարիլ Օրմանեան. միայն թէ վնասու-
ուի, հետազօտուի ուր որ պէտք է և ինչպէս
որ պէտք է: Սակայն եթէ այս ընելու ըլլար
չպիտի կարենար ուզած տեղը տանիլ իր Ե-
կեղեցւոյ նութիւնը, և այդ գործին չի գար.
Իր չէնքին հիմը կը քանդի և Հայ Եկեղեցին
չունենար իր ծագումէն՝ Օրմանեանի դիտած
անկախութիւնը:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՐ

ՏՕՆԱՑՈՅՑ

Մարտ 30	+	Նոր Կիրակի ԳԿ.
31	Բշ.	Թ. օր Յիկանց
Ապրիլ 1	Դշ.	Ժ.
2	Դշ.	ԺԱ.
3	Եշ.	ԺԲ.
4	Ուրբ.	ԺԳ.
5	Շր.	ԺԴ.

Ս. ԹՈՎԾԱՍ ԱԳՈՒԻՆԱՑԻ,

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ա Յ Ի Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

(Շար. եւ վերջ)

Անշուշտ, բոլոր այս շնորհքները թանկագին էին. բայց անոր խոնարհութիւնը զանաւ. ունէր կը փայլեցնէր: Քանցի այդ խոնարհութիւնը աշխատի խորունկ էր և այն տախծանի, որ իրաւունք ունեցաւ նա Աստուծոյ գոհութիւն մատուցանելու իր ամբողջ կեանքին մէջ բնաւ անախտութեան զգոյցով ունեցած չլրջաւուն, որով յանցապարտ ըլլար կամ իր գործին վարձքը կորսնցնէր. Բնաւ երբեք չուզեց Նարդիի արքայականութիւնն ընդունիլ, և ոչ ուրիշ եկեղեցական արժանապատուութիւններ, զորոնք Ս. Քաջանայակերտ կ'առաջարկէր իրեն. և այս պարգապէս ինքը զինքը անարժան դատելուն համար Միայն Նորին Սրբութեան ազգեց, որ՝ եթէ Եկեղեցւոյ համար իր բրած փորձիկ ծառայութիւնները ու է կերպով կը գնահատէր, հաճի Ամենաուրբ Հաղորդութեան Խորհրդոյն ի պատիւ տօն մը հաստատել. անանկ որ, այս տուր վարդապետիս թախանձանքը և իր աշխատութեանց իր վարձ է որ հաստատուեցաւ այս տօնախմբութիւնը:

Անգամ մը ներկայ գտնուեցաւ շատ պարծենկոտ ու անխոհեմ կրօնաւորի մը քննութեան ճառին, որ իւր սրամտութիւնը ցոյց տալու համար ուզեց Ս. Թովմասին պաշտպանած ու սարկեցուցածներուն հակառակ կարծիքներ պաշտպանելու: Սակայն Սուրբը ամենեւին հակառակ չխօսեցաւ անոր, և ասանկով մեծ շինութիւն տուաւ ներկաներուն իր պարկեշտութեամբը, որքան չէր տուած նախապէս իր վարդապետութեամբը:

Օր մը սեղանատան մէջ ընթերցում կը կատարէր ճաշի ժամանակի Ընթերցողներու վերակացուն յանդիմանեց զինքը շէշտի մը համար. և թէպէտ Սուրբը քաջ գիտէր թէ ինքը բնաւ սխալ չէր կարդացած՝ այլ վերակացուն էր որ սխալ կ'ընէր, սակայն այդ սխալ շէշտով կրկնեց ընթերցումը, և իր ուղիղ հնչումը փոխեց ի վստփարս Յետոյ երբ ասոր

պատճառը հարցուցին իրեն, ըսաւ թէ Կարեւորութիւն չունի վանկ մը երկար կամ կարճ հնչել, սակայն շատ կարեւոր բան է խոնարհ ու հնազանդ ըլլալ:

Խոնարհութեան այս աղբերակներն կը բղիւր այն բարի համարումն զոր նա ունէր ամենուն վրայ. ոչ մէկուն վրայ չար կը խօսէր կամ կը դատէր. քանզի խոնարհ եղողին հոգին միշտ ինք իր մէջ ամփոփուած է. եւ առաջ և վերջը կը զբաղի միայն իր ոչնչութեան մտածութեամբ. և կը վախճայ միայն իր սեպհակուն տկարութենէն և բոլոր մարդերը իր անձէն վեր կը բռնէ:

Ս. Թովմաս կաթողիկէ ճշմարտութիւնը կը մեկնարանէ զօրաւոր պատճառարանութիւններով. բայց բնաւ դառն կամ արհամարհոտ օճեր չի գործածեր անոնց հանդէպ, որոնց ճշմարտութիւնը կը ցուցնէ: Եւ այս քաղցրութիւնն ալ յառաջ կու գար իր եղբայրսիրութենէն, որով անկաւ բոլոր մարդերը կը համարէր իր իր եղբայրները, որոնց յառաջդիմութեան համար շատ մեծ գոհունակութեամբ կ'աշխատէր, քանի որ այդ էր Աստուծոյ կամքը:

Իր հրապարակական քարոզութիւններն ու ճառերը, ոչ արուեստակեալ էին, ոչ սեթեւեթեալ բառերով ու գեղեցիկ պարբերութիւններով պաճուածուած, ալ կը գործածէր հասարակ ու բնատանկան տապալուածներ: Այս եղանակաւ, օգնելով նաեւ իր վարուց սրբութիւնը, բազմաթիւ հոգիներ դարձուց ապաշխարութեան, զանաւ. փղձկեցնելով մինչեւ յարատաւաւ և ներշնչելով անոնց մեծ ցաւ մը իրենց մեղքերուն վրայ:

Բայց մինչդեռ այս ջոհը ամենամեծ փայլով մը կը շողար և քաղցր լոյս մը կ'արձակէր, Աստուածուն Նախախնամութիւնը հաճեցաւ մարել պայն այս աշխարհիս մէջ՝ յաւիտենապէս շողացնելու համար յերկինս: Երբ կը գտնուէր իր քրոջը վանքը, ուր նոր հասած էր, աղօթքի ժամանակ ինքիւրմէն դուրս յափ տակուեցաւ. և այս երկնաւոր հիացումը տեւեց ամբողջ երեք օր. որու վրայ շատ խառնեցան իր քոյրն ու կրօնակից եղբայրները: Երբ՝ սթափեցաւ, արտին խորերէն հառաչներ ու հեծութիւններ կ'արձակէր՝ յիշելով տեսած բաները և որոնց քով իր գիտցածները ոչինչ էին: Ասոր համար է որ իրեն քով գտնուող Հ. Քէզինապոսին ըսաւ վստահութեամբ ինքն իստեքերը. Պէտք է, զաւակս, որ քեզի զաղնիք մը յայտնեն, զոր սակայն կ'արգելում որ իմ մանուրնէս առաջ ու եւ է մէկուն քսես. այսինքն քէ ես այլ եւս պիտի դադրիմ գրելէ. որովհետեւ Աստուած ինձի այնքան զարմանալի խորհուրդներ ցցուց՝ որ իմ մինչեւ ցայսօր գրածս եւ սորվեցուցածս կ'աւարտապէս ոչինչ է անոնց բով: Եւ նոյն ժամանակ դուշակեց անոր թէ իր մահը մօտ էր:

Այդ միջոցին Գրիգոր Ժ. Քաջանայակերտ Լիոն քաղաքին մէջ գումարած ժողովին հրաւիրուեցաւ Ս. Թովմաս: Եւ երբ Նարդիէն մեկնեցաւ հոն երթալու

Համար, կիստերսականաց Կարգին Ֆոսսա-Նովա վան-
քին մէջ ուր հասած էր, յանկարծ հիւանդ ինկաւ,
և նախագիւց որ հոն պիտի աւարտէր իր օրերը. ոյր
վասն Սաղմոսերգուին սա խօսքը կրկնեց. Այս է հաւն-
գիւս իմ յաւիտեանս յաւիտենից (Սղմ. ՃԼԱ. 14): Այն
վանքին կրօնաւորները ազաւեցին իրեն որ Երգ Երգոցը
մեկնէ իրենց, ինչպէս Ս. Բեռնարդոս ըրած էր Քիա-
րովալէի վանքին մէջ: Բայց Ս. Վարդապետը պա-
տասխանեց. Տուէ՛ք ինձի Ս. Բեռնարդոսի հոգին, եւ ես
ձեզի մեկնեմ Երգ Երգոցը, ինչպէս մեկնեց Ս. Բեռ-
նարդոս: Սակայն այդ բարի կրօնաւորները այնչափ
ստիպելին զինքն ու թախանձեցին, և ինքն աշխարհ
բարեի, հեզ և զիջանող բնութեան տէր էր, որ չկը-
ցաւ վերջնականապէս մերժել անոնց խնդիրքը և գո-
հացուց անոնց ջերմեանդուած թիւնը: Բայց երբ հո-
սաւ եօթներորդ գլխոյն սա խօսքերուն, Եկո՛ւր, սի-
րելի իմ, երթա՛մ դաւեթը, ա՛յ չկըցաւ աւելի ա-
ռաջ կրթալ: Երբ զգաց որ հասնելու 'րայ է այն
ժամը որուն աշխարհ փափաքեր էր, և յորում ա՛յ
վերջ պիտի գտնէին իր աշխատանքներն ու պիտի սկը-
սէր վայելել յաւիտեանական խաղաղութիւնն ու
հանգիստը խոստովանեցաւ ու խնդրեց Ս. Հաղոր-
դութիւնը, զոր ընդունեցաւ գետնի վրայ խոնարհ
երկրպագութեամբ, ուղեւոր աշպէս ի խոր խոնարհել
իւր Փրկչին ու Աստուծոյն առջեւ: Ազաւեց իւր Տի-
րոջ որ իրեւ հաճոյական ծառայութիւն մը զիջանի
ընդունել ինչ որ ինք գրած էր իրեն վրայ և իրեն
համար, եթէ այդ իր գրածները ճշմարտութիւն էին.
Իսկ եթէ սխալած էր, ներէ իր ազիտութեան. որով-
հետեւ բնաւ երբեք միայն ունեցած չէր Անոր կամ-
քէն բաժնուելու: Աւելցուց նաեւ թէ իր ոտքերուն
առջեւ կը գնէր ինչ որ սորվեցուցած ու ճառած էր.
և թէ այս ամէնը կ'ենթարկէր Ս. Հոգւմ'ական Յ-
